ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և Էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. ապրիլի 1-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Ռուբեն Սինոյան	Կոմիտեի փոխնախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 6-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **«Վաչիկ» ՖԱ ակումբի կողմից ներկայացված դիմումի քննարկում.**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վաչիկ» ՖԱ ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Վաչիկ-09» թիմին հանել Մ-13Մ1 առաջնությունից, «Վաչիկ» ՖԱ ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

2. **30/03/22թ. «Նոա-09»-«Վան-09» (13Մ4042) խաղին «Վան-09» թիմի մարզիչ Հայկ Նարիմանյանի (N 162) հեռացման մասին, որի հետևանքով խաղը չի շարունակվել.**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վան-09» թիմի մարզիչ Հայկ Նարիմանյանի (N 162) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական կանոնակարգի 44-րդ հոդվածի 28-րդ կետը՝ «Վան-09» թիմի մարզիչ Հայկ Նարիմանյանի (N 162)

նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն» և որակազրկել 1 խաղով, «ՖԱ Վան ՀԿ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական կանոնակարգի 44-րդ հոդվածի 13-րդ կետը՝ «Վան-09» թիմին գրանցել 0:3 հաշվով տեխնիկական պարտություն, «ՖԱ Վան ՀԿ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով

3. **27/03/22թ. «Ֆյունիկ-05»-«Շիրակ-04» (18A051) խաղին «Շիրակ-04» թիմի ֆուտբոլիստ Արտուշ Հավերցյանի (N 29800) հեռացման մասին.**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ-04» թիմի ֆուտբոլիստ Արտուշ Հավերցյանի (N 29800) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը «Շիրակ-04» թիմի ֆուտբոլիստ Արտուշ Հավերցյանին (N 29800) որակազրկել 1 խաղով, «Շիրակ ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

4. **«Մակարավանք» ակումբի կողմից ներկայացված դիմումի քննարկում:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել Մակարավանք ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական կանոնակարգի 48-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Մակարավանք ֆզ» թիմին հանել ԱԽ առաջնությունից, «Մակարավանք» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

<u>Հիշեցում՝</u>

Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

Նախագահ՝ Կարեն Հովհաննիսյան

Փոխնախագահ Ռուբեն Սինոյան

Անդամ և քարտուղար՝ Հայկուհի Ռշտունի

Անդամներ՝ Բաբկեն Ղալոյան

Տիգրան Իսրաելյան